ՍԵՎԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԱՆԳՆԵՐԸ

Բանաստեղծուհի, գրող, հրապարակախոս Սիլվա Կապուտիկյանը ողջ կյանքում՝ սկսած 1962 թվականից, շրջագայել է աշխարհատարած հայկական Սփյուռքով, շփվել հայության ամենատարբեր զանգվածների հետ եւ հետագայում իր 40-ամյա ուղեւորությունները ամփոփել 4 ուղեգրական հատորներում՝ «Քարավանները դեռ քայլում են» (1964թ.), «Խճանկար հոգու եւ քարտեզի գույներից» (1976թ.), «Գույներ նույն խճանկարից» (1989թ.), «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» (2002թ.): Ուղեգրություններում գրողը անդրադառնում է սփյուռքահայության կյանքի բոլոր ոլորտներին, այն ամենին, ինչով ապրում, շնչում, իր գործունեությունն է ծավալում Սփյուռքի հայությունը: Ուղեգրությունները իրենց բնույթով համադրական են եւ ներառում են ժանրային մի շարք տարատեսակներ, ինչպիսիք են բուն ուղեգրությունը, հուշագրությունը, զրուցապատումը, հրապարակախոսությունը, օրագրությունը:

Կապուտիկյանի ուղեգրությունները առանձնանում են իրենց քաղաքական հնչեղությամբ: Անհնար է մեկ հոդվածի շրջանակներում ներկայացնել գրողի ուղեգրությունների ողջ քաղաքական պատկերը, եւ մենք այստեղ կներկայացնենք միայն Սփյուռքի ավանդական կուսակցությունների գաղափարական առկա հակասությունների արտացոլումը խորհրդային տարիներին լույս տեսած ուղեգրական երեք հատորներում եւ հատկապես Կապուտիկյանի ընդգծված վերաբերմունքը Սփյուռքում գործող կուսակցությունների նկատմամբ:

Կապուտիկյանին հետաքրքրում է Սփյուռքի քաղաքական դիրքորոշման, հակամարտությունների, հակադրությունների հարցը, նաեւ՝ դրանցով պայմանավորված, գաղութների ապագան, որը, ըստ նրա, անորոշ է: Բանաստեղծուհին տագնապում է, որ մի շարք վտանգներ սպառնում են հայկական Սփյուռքի խաղաղ գոյակցությանը: Գրքերում հեղինակն անդրադառնում է կուսակցական հակասություններին, որոնք գաղթած հայերն իրենց հետ օտար ափեր էին տարել՝ հարմարեցնելով եւ համապատասխանեցնելով «նորագույն պայմաններին»: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես Սփյուռքում գոյություն ունեցող երկպառակությունները հաճախ վերածվում են թշնամանքի, եւ այդ ակնառու հանգամանքները չեն թողնում ամրապնդել կապը Խորհրդային Հայաստանի հետ: Ոչ միայն մեր ավանդական կուսակցությունները, այլեւ գործող տարբեր կազմակերպություններն էին հայտնվել ներքին բախումների

մեջ: Սփյուռքում գործող երեք՝ Հնչակյան, Ռամկավար եւ Դաշնակցություն կուսակցությունների գաղափարական, քաղաքական տարաձայնությունները թերթերից ու քաղաքական կառույցներից թափանցում էին նաեւ մշակութային, բարեգործական հաստատություններ եւ տարբեր-տարբեր սրահներ, անգամ վարժարաններ ու եկեղեցի եւ խարխլում գաղթաշխարհի կյանքի ընթացքը, իսկ բանաստեղծուհու՝ Սփյուռքում լինելու ընթացքում մրցակցությունը նրանց միջեւ ավելի էր խորանում. այդ ամենը հեղինակը հետագայում արտացոլել է իր գրքերում:

Բանաստեղծուհու Բեյրութում լինելու առաջին օրվանից Թեքեյան մշակութային միությունը պատրաստություն է տեսնում նրան Դամասկոս հրավիրելու, սակայն առաջ անցնելով՝ դա հաջողվում է հնչակյաններին: Սա ռամկավարների համար «լուրջ պարտություն» էր: Նրանք չէին հաշտվում, որ բանաստեղծուհուն մի տեղ հրավիրելու համար պետք է հնչակյաններից թույլտվություն ստանան, քանի որ հյուրանոցում հայրենի հյուրին վերջիններս մշտական հսկողության տակ էին պահում: Ցավալի էր բանաստեղծուհու համար տեսնել, որ հակառակությունները հաճախ ծնվում էին մի թեթեւ խոսքից: Այսպես, բանաստեղծ Գեւորգ Էմինի՝ Հունաստանում հանդիպումներից մեկի ժամանակ ելույթում հնչեցրած մի խոսքը՝ «Ես դաշնակ, հնչակ չեմ ճանաչում, ես հայ գրող եմ եւ ինձ համար հայը հայ է», տարակարծություն է առաջացնում, եւ թեքեյանական «Արարատից» բաժանվում, ստեղծվում է հնչակյանների «Արաքս» միությունը: «Արաքս» միությունից էլ, իր հերթին, ստեղծվում է «Սեւան» միությունը. «Ի՞նչ վնաս, եթե Աթենքի հայությունը նոր հավաքատեղի մը ալ ունենա»: Եվ սկսվում է այդ միությունների մրցակցությունը: Յուրաքանչյուրը համարում էր, որ պետք է համագործակցել, բայց նաեւ համոզված էր, որ պետք է համախմբվել հենց իրենց շուրջը: Այստեղից էլ ծագում էր վտանգը: Հանդիպումներում լսած բողոքներին գումարելով սեփական կարծիքը՝ Կապուտիկյանը այն համոզմանն է գալիս, որ Հայկական Սփյուռքը այլեւս չի կարող հին մեթոդներով իր գոյությունը պահել: Նոր ազդակներ են պետք հայությանը առաջ տանելու համար: Կուսակցական հակամարտությունները վերածվում են ընտանեկան գժտությունների եւ ջլատում Սփյուռքը՝ հայությանը նետելով ուծացման երախը: Այս ամենը հասկանալով հանդերձ՝ չեն ուզում միավորվել մեկ գաղափարի շուրջ, եւ հիմնականում նրանք, ովքեր զգում են չմիավորվելու կործանիչ հետեւանքները: Ամեն մեկն իր սիրտն էր բացում բանաստեղծուհու առաջ, վստահում իր գաղտնիքները՝ համոզված լինելով, որ ճիշտը հենց ինքն է եւ լիարժեք իրավունք ունի առաջնորդելու մյուսներին: Անկախ այս հակադրություններից՝ ուղեւորությունների ընթացքում բանաստեղծուհին հանդիպել է բոլոր շրջանակներին, եւ չնայած կուսակցական տարբերություններին՝ Կապուտիկյանին լսելու փափագը մեծ է եղել բոլորի մեջ, եւ գրքերում մենք տեսնում ենք բազմաթիվ մարդկանց, ովքեր հարյու-

ռավոր կիլոմետրեր են կտրում, որպեսզի հանդիպեն սիրելի բանաստեղծուհուն:

Կապուտիկյանը տագնապում է նաեւ, որ Սփյուռքում անգամ «խառը ամուսնություններ» չեն լինում, այսինքն՝ հակադիր կուսակցությունների ներկայացուցիչները չէին ամուսնանում իրար հետ: Սա ոչ միայն կուսակցական խնդիր էր, այլեւ հայության սպիտակ ջարդին նպաստող իրողություն:

Գաղութների քաղաքական հակառակությունները համայնքները պահում էին լարվածության մեջ: Շրջանակների չկամությունը միմյանց հանդեպ ազդում էր նաեւ հայաստանյան հյուրի վրա: Ամենավտանգավորը, որոնց արծագանքում է բանաստեղծուհին, քաղաքական նրբերանգների ներթափանցումն էր կրթական հաստատություններ: Լինում են դեպքեր, երբ քաղաքական-գաղափարական հակառակությունների պատճառով հայրենի հյուրը ստիպված է լինում չայցելել որոշ վարժարաններ (օրինակ՝ Ուրուգվայում): «Ինչո՞ւ պետք է մեր որոշ գաղութներում այդքան շատ լինեն անձնական կռվշտուքներն ու «ըսի-ըսավ»-ները, հաճախ՝ առանց սկզբունքային հիմքի, զուտ փառասիրական ու երբեմն էլ շահադիտական մղումներից դրդված՝ այս մանր ու մեծ գժտությունները, որ հայ բանաստեղծը ակամա կանգնի այսպիսի անդուր վիճակների առջեւ, մեկ՝ խնդրի, մեկ՝ կոպտի, մեկ՝ վիճի, մեկ՝ համակերպվի, մեկ՝ «դիվանագիտություն» բանեցնի եւ էլի ուրիշ արգելքներ հաղթահարի, ինչ է թե հնարավորություն ունենա հանդիպելու գաղութի բոլոր հայրենասեր զանգվածներին»:[1]

1956 թվականից, երբ Կիլիկյան կամ Անթիլիասի կաթողիկոսությունը հակաէջմիածնական դիրքորոշում որդեգրեց, խորացան հակամարտությունները ոչ միայն Դաշնակցության եւ խորհրդային հայրենիքի, այլեւ եկեղեցիների միջեւ: Ցավալի էր բանաստեղծուհու համար տեսնել եկեղեցու տարանջատումը, եկեղեցին, որ գլխավոր համախմբող ուժը պետք է լիներ ողջ սփյուռքահայության համար, դարձել էր թիրախ: Սա նույնպես ազդում էր հայրենի հյուրի վրա՝ դիրքորոշում մշակելիս: Կապուտիկյանը այցելում է Անթիլիասի կաթողիկոսության բակի եղեռնի հուշարձան-մատուռը եւ ծաղկեպսակ դնում, բայց կաթողիկոսին չի այցելում, որովհետեւ դա կդիտվեր որպես էջմիածնի կողմից հաշտության քայլ, իսկ նման բան կաթողիկոսն իրեն չէր երաշխավորել: Միաժամանակ երկու՝ էջմիածնական եւ անթիլիասական թեմերի գոյությունը Սփյուռքում հավելյալ լարվածություն է առաջացնում համայնքներում: Լարվածության մի արտահայտությունն էր նաեւ այն, ինչին բանաստեղծուհին ականատես եղավ Կիպրոսում: Այստեղ Լառնակայի Սուրբ Ստեփանոս հայկական անթիլիասական եկեղեցում պատարագիչը տիրոջից խնդրում է պահել եւ

---

[1] Կապուտիկյան Սիլվա, «Գույներ նույն խճանկարից», Եր., 1989, էջ 331:

պահպանել Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս տեր Գարեգին Երկրորդին, ամենապատիվ պատրիարք Կոստանդնուպոլսի Շնորհք սրբազան արքեպիսկոպոսին, Երուսաղեմի առաքելական աթոռի՝ Տեր Եղիշե սրբազան արքեպիսկոպոսին... Ոչ մի տող ամենայն հայոց կաթողիկոսի մասին: Սա եւս չէր կարող չազդել Խորհրդային Հայաստանից արտասահման այցելած հյուրի, մանավանդ գրականության նվիրյալի վրա:

Հայտնի է, որ Հայաստանից վտարանդի կուսակցությունների նկատմամբ Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում թշնամանք էր հրահրվում՝ նույնը պարտադրվելով սերունդներին: Դա մեծամասամբ վերաբերում է Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Կապուտիկյանի գործերում այս թշնամանքը ընդգծված ձեւով դրսեւորվել է խորհրդային շրջանում լույս տեսած վերջին երկու՝ «Խճանկար հոգու եւ քարտեզի գույներից» եւ «Գույներ նույն խճանկարից» ուղեգրական գրքերում: «Քարավաններում» գրողի հակադաշնակցական վերաբերմունքը մեծ տեղ չունի, եւ պատճառն այն է, որ Սփյուռքը նոր էր բացվում հայության եւ բանաստեղծուհու առջեւ, գրաքննությունն էլ մեծ չէր, եւ Կապուտիկյանն ուղղակի ներկայացնում է այն ամենը, ինչ տեսնում է Մերձավոր Արեւելքում: Մյուս գրքերում արդեն, խորանալով քաղաքականության մեջ եւ տալով գաղթաշխարհի քաղաքական պատկերը՝ հեղինակը վերլուծում է իրավիճակը՝ ելնելով որոշակի պահանջներից: Այսինքն՝ վերլուծությունները կրում էին ժամանակի վերաբերմունքը եւ հաճախ հանգում անարդարացի քննադատության: Իհարկե, Կապուտիկյանն այս ամենին առաջին հերթին վերաբերվում էր որպես բանաստեղծ, եւ նրա խոսքը պետք է հասկանալ իբրեւ գրողի սրտից բխած խոսք: Նա, օրինակ, նկատում է, որ զանգվածային հայրենադարձության տարիներին, երբ Հայաստան գաղթեցին հարյուր հազարավոր սփյուռքահայեր, դաշնակցականները ոչ միայն չեկան, այլեւ հեռացան Հայաստանից, գերակշռող դիրք գրավեցին մյուս կուսակցությունների համեմատությամբ: Բերում է օրինակներ, թե ինչպես դաշնակցականամետները չեն ցանկանում գալ Հայաստան՝ փորձելով հաստատել այն կարծիքը, որ իրենք Խորհրդային Հայաստանին թշնամի են: Դամասկոսի «Թարգմանչաց» վարժարանում ծանոթանում է 80-ամյա Խաչիկ Գալանճյանին, որը դեռ 20 թվականից Հայաստանում կին ու երեխաներ է թողել, սակայն չի ուզում գալ Հայաստան՝ նրանց տեսնելու. «Չեմ ուզեր, ես ատանկ Հայաստան չե՜մ ուզեր»: Անդրանիկի բանակի զինվորը ձեռքը տանում է չորացած կրծքին, ուր գնդակի բազմաթիվ հետքեր կային, ու ասում. «Էրզրումեն մինչեւ Զանգեզուր ամեն թիզ հողի վրա իմ արյունը կա...»: Հողը նրա համար ավելի թանկ է, քան ընտանիքը, նա չի տեսնում հողը, ուրեմն չի ուզում տեսնել նաեւ ընտանիքը, մինչեւ մի օր ստեղծվի այն Հայաստանը, որի կերտման համար նա արյուն է թափել: «Պիտի ըլլա՝ այդ Հայաստանը»: Իսկ այժմվա Հայաստանը թեեւ իր ստեղծածն է, բայց իր երազածը չէ: Հրաժեշտ տալիս ավելի ակնառու է

երեւում ծերունու ատելությունը. «Գնա՛, բարո՛վ երթաս... Մե՛նք ստեղծեցինք քո ատ Հայաստանը, թրքահայերը... Ու հիմա դո՛ւք, ռուսահայերդ կվայելեք»,- էրզրումցի պղնձագործի մեջ եռում են ուժն ու ատելությունը: Դաշնակցական ծերունու ատելությունը Հայաստան երկրի հանդեպ խաբված լինելու հետեւանք է, եւ հայրենի հյուրը չի արձագանքում: Գրքում եւս հեղինակը չի պատասխանում հարցին, թե ինչո՞ւ 80-ամյա էրզրումցի ծերունին, որ հայրենիքի ազատագրված ամեն թիզ հողի համար արյուն է թափել, չի ուզում տեսնել նույն այդ հայրենիքը: Ծերունու վիրավորանքը մնում է անպատասխան: Բրազիլահայ Դաշնակցական Բարսեղ Բարսեղյանը 1981թ. եղել է Հայաստանում, հավանել այն, իսկ ռեժիմը՝ ոչ: Հիշում է 37, 49 թվերը, երբ շատ մտավորականներ կորստյան մատնվեցին: «Ո՛չ, ադ Հայաստանը ինձի ձեռ չի տար... Սեւամորթը անկախություն ստացավ, հնդիկը ստացավ, արաբը ստացավ, ես ալ անկախ Հայաստան կուզեմ»:[2] Դա էր պատճառը, որ Մոնտեվիդեոյում՝ «Պլազզա Արմենիայի» դիմաց, գրել էին. «Մենք ազատ, անկախ Հայաստան կուզենք»: Դարձյալ հեղինակը չի պատասխանում հարցին, թե ո՞րն է պատճառը, որ Սփյուռքում գործող մյուս կուսակցություններից հենց Դաշնակցությանը չի դուր գալիս Հայաստանի ռեժիմը: Այս ամենը Կապուտիկյանը ներկայացնում է՝ փորձելով բացասական երանգավորում տալ՝ առանց հիմնավորումի: Կապուտիկյանի վերաբերմունքը դրական է եւ հնչակյանների եւ, առավելապես, ռամկավարների նկատմամբ, քանի որ նրանք դրական կողմնորոշում ունեին դեպի Խորհրդային Միությունը:

Ամենուր բանաստեղծուհին մասնակցում է նաեւ Դաշնակցության կազմակերպած միջոցառումներին, իսկ ընթերցողներին մանրամասն պատմում հանդիպումներում ունեցած տարաձայնությունների մասին: Ամենուր, ինչպես երեւում է եւ ինքն էլ խոստովանում է, «ջանք չէր խնայում»՝ հակադրվելու «անհեռատես» դաշնակցականներին: Պետք է ասել, որ Կապուտիկյանն անձամբ վատ տրամադրվածություն չուներ, նա արտահայտում էր հայրենիքի վերաբերմունքը այդ կուսակցության նկատմամբ, եւ հասկանալի է, որ նման վերաբերմունքի է արժանանում: «Խճանկարում» արդեն բանաստեղծուհին չի կարողանում պահպանել հավասարակշռությունը եւ գնում է ծայրահեղությունների: Գիրքը կարդալիս թվում է, թե այն գրելու ամբողջ նպատակը Դաշնակցության քննադատությունն է: Բացի Տորոնտոյի «Հայ կենտրոն» սրահի երեկոյից, մյուս միջոցառումներում դաշնակցականները խոսքի մեջ շատ զգույշ էին, որպեսզի չվիրավորեն Խորհրդային Հայաստանից եկածին: Իսկ նշված երեկոյի ընթացքում, բացի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունից, հնչում են դասական եւ սփյուռքահայ հեղինակների ստեղծագործություններ: Ոչ մի ժամանակակից հայաստանյան երգ, խորհրդահայ բանաստեղծների ոչ մի

[2] «Գույներ նույն խճանկարից», էջ 392:

գործ, իսկ բեմում եռագույն դրոշն էր: Բնական է, որ սա տեսնելով՝ Կապուտիկյանը կգովաբաներ խորհրդային հայրենիքը, եւ նույնքան պարզ է, որ բանաստեղծուհու ելույթները կունենային ընդդիմախոսներ, ովքեր հանդես էին գալիս թերթերում:

Դամասկոսում գրողը կարդում է «Ազդակ» թերթը, որում դաշնակցական Ռ. Դարբինյանի ստորագրությամբ «Ինչպես են շահագործում հայրենիքի կարոտը» հոդվածում հոդվածագիրը նշում էր, թե Կապուտիկյանը մի ելույթում քննադատում է կուսակցությանը, երբ լսարանը ոչ դաշնակցական է, իսկ երբ դաշնակցությունն է կազմակերպել՝ գովում է: Նա նաեւ նշում էր, թե Կապուտիկյանը վարժարաններ այցելելիս ունեցել է հետին նպատակ՝ Հայաստանը ներկայացնել վառ գույներով, որ երեխաները ի սկզբանե զրկված լինեն հայրենիքի մասին ճիշտ պատկերացում կազմելուց:

Այս հրապարակումը տեղի է տալիս նոր խմորումների եւ պատճառ դառնում, որ կուսակցական թերթերը սկսեն նոր պայքար ծավալել միմյանց դեմ: Կապուտիկյանը բացատրում է, որ իրականում ինքն ուզում է՝ երեխաները մանկուց հազար թելերով կապվեն Հայաստանին, իրենց դուրս չմղեն Հայաստանի կյանքի ընթացքից: Նա փորձում է հասկացնել, որ եթե հնարավոր չէ հայրենիք գալ, պետք չէ ուրեմն Ամերիկա, Կանադա կամ այլուր գնալ, ինչպես անում են շատերը, պետք է գոնե, մնալ Բեյրութում, պահպանել հայկականությունը: Դաշնակցական գործչի հոդվածն ուներ իր պատճառները, քանի որ Դաշնակցությունը չէր ընդունում Հայաստանում խորհրդային վարչաձեւի գոյությունը եւ հայության երկրորդ թշնամին (Թուրքիայից հետո) համարում էր Խորհրդային Միությունը: Երկուստեք վիրավորանքները շարունակվում են ամեն երեկոյի, իսկ գրքում այս վեճերին են նվիրվել բազմաթիվ էջեր: «Խճանկարի» հեղինակն այն միտքն է հայտնում, թե դաշնակցականները, նստած առատ սեղանների մոտ, ուտում-խմում են, ապա պահանջում Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան: Սակայն այստեղ հիշենք, որ Հայ Դատի համար պայքարն այդ տարիներին ընթանում էր Հայաստանի սահմաններից դուրս: Գաղտնիք չէ նաեւ, որ Հայաստանը սկսեց Ցեղասպանության տարեդարձը նշել միայն 1965 թվականից սկսած՝ հետեւելով Սփյուռքի օրինակին: Կապուտիկյանը ճիշտ էր, թերեւս, մի հարցում, որ «Հայաստանում, այս մի բուռ հողի վրա է կերտվում աշխարհասփյուռ ժողովրդի ճակատագիրը, նրա ներկան ու ապագան»: Չմոռանանք նաեւ, որ Սփյուռքի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ միայն 80-ականների երկրորդ կեսին: Գրողը չէր թաքցնում, որ դաշնակցականները հայրենասեր են, բայց յուրաքանչյուր կուսակցականի ելույթից վատ խոսքերի սպասելով՝ զարմանում էր, որ, հակառակ իր սպասածի, այդպիսիք չէին հնչում, եւ այս անգամ էլ նրանց կողմից «մեղա գալու» պատճառն էր փորձում գտնել:

Սանֆրանցիսկոյում հյուր է լինում Պարսկաստանից եկած վանեցի մի ընտանիքի, որտեղ երեխաները, ի տարբերություն սփյուռքյան այլ ընտանիքների, հայախոս էին: Տղան Տիգրանը, շաբաթօրյա հայկական վարժարան հաճախող 14-15-ամյա մի պատանի, փոքրիկ սենյակը դարձրել էր հայոց պատմության փոքրիկ թանգարան: Սենյակի մի անկյունում կախված էր եռագույն դրոշը: Ստվար ալբոմը լեցուն էր նկարներով՝ Տիգրան Մեծ, Սահակ-Մեսրոպ, Վարդանանց պատերազմ, Վարդան Մամիկոնյան, Քրիստափոր Միքայելյան, Զավարյան, Արամ, Ռոստոմ, Սերոբ... 20 թվականից այս կողմ միայն Սասունցի Դավթի արձանը: Այուս էջերը դաշտարկ էին: «Զտարյունների» այս արարքը առիթ է տալիս բանաստեղծուհուն գրելու. «Հայաստանի ժողովուրդը՝ զբաղված իր առօրյայով, երկիր կառուցելու իր բազմապիսի հոգսերով, չի էլ հիշում Դաշնակցության գոյության մասին»: Բայց մի՞թե Հայաստանի ամբողջ ժողովուրդը ցնծությամբ էր ընդունում խորհրդային կարգերը: Իրականում՝ ոչ: Հենց Կապուտիկյանի հայաստանյան գրողների միության համագումարներում, կուսակցական ժողովներում եւ այլ հանդիպումներում ունեցած ելույթներն ընթերցելիս տեսնում ենք, որ բանաստեղծուհին ամեն պահի քննադատում էր խորհրդային իրականության բացասական կողմերը՝ գրողի իր ծայնը բարձրացնելով երկրում տիրող արատների դեմ՝ բյուրոկրատիա, կաշառակերություն, Սփյուռքի անտեսում, մայրենի լեզվի իրավազրկում, Մեծ Եղեռնի անտեսում, իսկ Խորհրդային Միության հայաշատ վայրերում՝ հայության կյանքը կազմակերպելու, դպրոց կամ հավաքատեղի բացելու դժվարություններ: Կապուտիկյանը քննադատում էր Սփյուռքի մասին Հայաստանի դիրքորոշումը: Նա միշտ ուշադրություն էր պահանջում Սփյուռքի հանդեպ եւ գրքերում էլ խոստովանում, որ հայրենիքը, սովետահայերը չեն կարող արժանի վերաբերմունք ունենալ բերել դեպի Սփյուռքը: Բանաստեղծուհին ինքն էլ «Քարավաններում» խոստովանում է, որ մինչեւ իր սփյուռքյան այցելությունները ինքը եւս չէր կարող հասկանալ աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայության խնդիրները:

Նման ելույթներ Կապուտիկյանն ունենում էր հայաստանյան ամբիոններից, իսկ արտասահմանյան ելույթներում նշում, որ հայերիս համար ամենաճիշտը սովետական վարչաձեւն է: Արտասահմանում, ուր կյանքը բավական տարբեր է Հայաստանի կյանքից, հայրենիքի հասցեին ասված ցանկացած անզգույշ խոսքի համար բորբոքվում է, երբ Հայաստանում ինքն է նման դիտողություն անում: Դրսում դա չի հիշվում, այլ միայն լավը՝ ցանկանալով ցույց տալ, թե հայրենիքում ամեն ինչ լավ է:

Գրքերից զգացվում է, որ Դաշնակցության քննադատությունը նախապես «ծրագրված» էր, ինչը, իհարկե, ուներ իր պատճառները: «Գաղտնիքը» մասամբ բացահայտում է «Քարավաններում», երբ 6-րդ գլուխը գրելիս ծանոթ գրողներից մեկը տեղեկանում է, որ ուզում է գրել Դաշնակցության մշակու-

թային միության՝ «Համազգայինի» մասին, ու հարցնում է. «Հը, ի՞նչ է, դո՞ւ էլ պիտի սկսես հայհոյանքներ գրել...»: «Ես ինչ որ տեսել եմ, այն կգրեմ»,- լինում է պատասխանը: Այս մեկ-երկու տողով Կապուտիկյանը ասես նախապատրաստում է ընթերցողին եւ ամբողջությամբ բնութագրում ժամանակի Հայաստանյան մտավորականության տրամադրությունները Դաշնակցության հանդեպ. շատերն էին վատ գրում, բայց քչերը՝ հոգու թելադրանքով:

Ժամանակի իրական պատկերը Կապուտիկյանը տվեց «Խճանկար»-ը գրելուց երեք տասնամյակ անց՝ «Չեմ կարող լռել» գրքում: «Զղջում եմ, որ Սփյուռքին նվիրված գործերումս, անկախ՝ նրանից համոզմունքով եմ ասել դա, թե պարագայական հանգամանքներից ելնելով, բավական խիստ եմ խոսել Դաշնակցության մասին»[3],- խոստովանում է գրողը: Գալով «Խճանկարին»՝ նշում է. ««Քարավաններում» դաշնակցական կուսակցության եւ նրա անդամների հետ վիճելու առիթներ չեմ ունեցել, մինչեւ վերջ համածայն եմ եղել նրա որդեգրած գործելակերպին, բայց «Խճանկարը» գրելիս աշխատում էի իմ այդ վեճերն ու անհամաձայնությունները ավելի շեշտել, տալ սկզբունքային հնչեղություն, ավելի կտրուկ պատասխանել նրանց գաղափարական հարձակումներին: Եթե ընթերցողը կարդա իմ այդ պայքարատենչ էջերը, պետք է զարմանա, թե ինչո՞ւ է հեղինակը այդքան կիրք ու էներգիա սպառել, այսքան արկ ու ռումբ թափել դիմացինի մի փոքրիկ կրակակետի վրա: Ի՞նչ իմանա խեղճ ընթերցողը, որ ինձ հարկավոր էր մի «մահանա» գտնել եւ դրա շուրջը խոսակցություն ծավալել, հայաստանյան խմբագիրներին «խաբս տալու» համար, որ, իբր, գրքի նպատակը ոչ թե մշակույթը, լեզուն, ազգային ինքնությունը պահպանելու՝ Սփյուռքի դժվարին ջանքերի պատկերումն է եւ այդ «մաքսանենգ» ճանապարհով՝ Հայաստանի ժողովրդի մտածումները նույնպես նույն ուղղությամբ լարելը, այլ հիմնականում «Դաշնակցության դեմ պայքար ծավալելն է», գաղափարական ընդդիմախոսությունները... Եվ այս բոլորը՝ գիրքը տպագրելի դարձնելու համար, տողատակի ասելիքը ընթերցողին հասցնելու համար»:[4] Գրողի այս բացատրությամբ, փաստորեն, ընթերցողին հանձնարարվում է ուշադիր կարդալ եւ հասկանալ, թե որն է եղել նրա՝ Դաշնակցությանը ընդդիմախոսելու պատճառը: Չմոռանանք, որ ավելի վաղ գրողն ակնարկել է տպագրական դժվարությունների մասին. «...Միայն ինձ ու Աստծուն է հայտնի, թե ինչեր եմ քաշել ես Սփյուռքին նվիրված իմ երեք գրքերը աշխարհ բերելիս»:

Անհամար գրախոսների՝ խմբագիրների, բաժնի վարիչների, տնօրենների զտարաններով անցնելուց հետո գրքերը հասնում էին Կենտկոմ, որտեղ եւս մանրադիտակով ստուգվում էր ամեն տողը՝ փնտրելով այնտեղ մեծ

---

[3] Կապուտիկյան Սիլվա. Չեմ կարող լռել. Եր., ՀՅ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 103:
[4] Նույն տեղում:

մասամբ անցյալի կամ Սփյուռքի իդեալականացում, Դաշնակցության հանդեպ հանդուրժողական վերաբերմունք: Պահանջվում էր դասակարգային վերաբերմունք հանդես բերել դեպի Սփյուռքը եւ այլն: Պահանջվում էր նաեւ մեջբերումներ չանել դաշնակցական գործիչների խոսքերից, եթե անգամ նրանք դրական են խոսել հայրենիքի մասին, չնշել, որ որեւէ հաստատություն հիմնվել է դաշնակցականի կողմից կամ Դաշնակցությունն է հովանավորում: Խոսքը միայն Դաշնակցության մասին չէր: «Խոսք իմ որդուն»-ը, որ Կապուտիկյանի «այցեքարտն» էր Սփյուռքում, այնտեղ հնչում էր բոլորի շուրթերից, իսկ Հայաստանում նացիոնալիզմի պիտակով դուրս էր մնում բանաստեղծուհու ժողովածուներից: Այս ամենով հանդերձ՝ նա շարունակում էր գրել: Ո՞րն էր Կապուտիկյանի համարձակության գաղտնիքը... «Նյութական ու բարոյական ապահովությունն ինձ հնարավորություն է տվել քիչ թե շատ համարձակ ապրելու, եւ որովհետեւ կախում չեմ ունեցել այս կամ այն ղեկավարից, ինձ նեղելն ու ճանապարհս փակելը դժվար է եղել: Իհարկե, եւ նեղելու, եւ ճանապարհս փակելու փորձեր արել են»:[5] Չէ՞ր լինի համակերպվող, չէ՞ր լռի շատերի պես, եթե նյութապես ապահով չլիներ: Կլիներ: Սակայն, այնուհանդերձ, չհարմարվել էլ չէր կարող, եւ քաղաքական լիցքերի նման արտացոլումը հենց հարմարվողականության արդյունք է:

Ուղեգրություններում ամբողջ Սփյուռքն է՝ հենված քաղաքական հակառակությունների վրա: Սա էր հայ գաղթաշխարհի պատկերը: Այստեղ առկա են սփյուռքահայության կյանքի բոլոր ոլորտները՝ իրենց դրական ու բացասական կողմերով, վերելքներով ու վայրէջքներով, որոնք, իհարկե, հիմք են տալիս տարբեր հետեւությունների: Սփյուռքում մեծ են տարբերությունները՝ ապրելակերպից մինչեւ գաղափարական սկզբունքներ: Ուղեգրություններում Կապուտիկյանը ցույց է տալիս, թե ինչպես Սփյուռքի քաղաքական հասունացումը գնում է բարդ, հակասական, բայց նույն մայրուղին դուրս եկող արահետներով: Բոլոր գաղութներն ունեն իրենց յուրահատկությունները, իրենց դեմքն ու դիմագիծը՝ մշակված տվյալ երկրի կյանքով:

Գրականությունը գրեթե միշտ քաղաքականացված է եղել. գրողները շատ հաճախ տուրք են տվել ժամանակի այս կամ այն քաղաքական ուժին: Կապուտիկյանի ուղեգրությունների քաղաքական կշիռն էլ, կարելի է ասել, գրականին հավասարազոր է:

---

[5] Կապուտիկյան Սիլվա, «Էջեր փակ գզրոցներից», Եր., «Ապոլոն», 1997, էջ 96: